

## **Ինչպես ցույց է տալիս համաշխարհային հետազոտությունը, համավարակը չչեղարկեց բյուջեների կազմման պրակտիկայի հաշվետվողականությունը**

**Վաշինգտոն** – Միջազգային բյուջետային գործընկերությունը (ՄԲԳ - IBP) հրապարակեց իր Բաց բյուջեների հետազոտության (ԲԲՀ) արդյունքները, համաձայն որի երկրների մեծ մասը COVID-19-ի համավարակի ժամանակ կարողացել են իրենց տարեկան բյուջեների բյուջետային գործընթացներում պահպանել ծախսման հաշվետու պրակտիկան: Դոմինիկյան Հանրապետությունը հայտնվեց դասակարգման աղյուսակի լավագույն տասնյակում՝ այն երկրների շարքում, որոնք առաջնորդում են բյուջեների թափանցիկության ընդլայնման և ինստիտուցիոնալիզացման գործընթացները: Հարավային Կորեան էլ իր հերթին առաջատար է բյուջետային գործընթացներում հանրային խորհրդակցությունների ներառական պրակտիկան ներդնելու հարցում: Վերջապես, Բենինը, Նիգերիան և Գամբիան հանդիսանում են բաց բյուջեների նախորդ հետազոտության համեմատ ամենամեծ առաջընթաց գրանցած երկրները:

Ինչպես նշում է ԲԲՀ համակարգող Անջալի Գարզը - «Հաշվետվողականության համակարգերը դեռևս շարունակում են, ընդհանուր առմամբ, մնալ թույլ, սակայն որոշ երկրների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական կամքի առկայության դեպքում առաջընթացը հնարավոր է: Բաց բյուջեների պրակտիկան հաղթող տարբերակ է, քանի որ այն ծնում է հանրային վստահություն առ այն, որ կառավարությունները կարող են քայլեր ձեռնարկել և առաջնորդել իրենց փոխառության ծախսերի նվազեցման ուղղությամբ այժմ, երբ համաշխարհային պարտքը և անհավասարությունը գտնվում են իրենց բարձրագույն մակարդակներում: Մենք հույս ունենք, որ ավելի մեծ թվով երկրներ կքաջալերվեն բացելու իրենց բյուջեները՝ թույլ տալով, որ նրանք անցնեն անցնեն հանրային խորհրդակցության և հանրային վերահսկողության գործընթացներով՝ ապահովելու համար հանրային սակավ միջոցների հասանելիությունը ազգաբնակչության այն խավերին, որոնք դրանց առավել կարիքն ունեն:»

Ինչ-որ չափով զարմանալի էր այն, որ համավարակը չչեղարկեց համաշխարհային մասշտաբով թափանցիկ և հաշվետու բյուջետային պրակտիկայում վերջին տարիներին համառ պայքարի արդյունքում ձեռք բերված նվաճումները: Երկրների մեծ մասն ի

վիճակի եղավ պահպանելու, իսկ որոշ դեպքերում նաև զարգացնելու, իրենց տարեկան բյուջեների բյուջետային գործընթացներում ավելի վաղ նվաճած ձեռքբերումները՝ շնորհիվ տեղեկատվության ավելի մեծ չափերով թվայնացմանը և հաշվետվողականության իրենց պրակտիկայի ինստիտուցիոնալացմանը: 2008 թվականի համեմատությամբ թափանցիկության համաթվի ցուցանիշն աճել է ավելի քան 20 տոկոսով: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի, Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան, Լատինական Ամերիկայի և Կարիբյան, ինչպես նաև Մերձսահարյան Աֆրիկայի (2017 թվականին գրանցած խորը անկումից հետո) տարածաշրջանները սկսած 2008 թվականից գրանցել են զգալի հաջողություններ իրենց բյուջեների թափանցիկության ընդլայնման հարցում:

Սակայն հետազոտությունը բացահայտեց նաև օրենսդրական վերահսկողության թուլացում, որը հետևանք էր քաղաքական անկայունության, համավարակի և իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ գործադիրի գերիշխանության: Որոշ երկրներում գործադիրը գտավ ուղիներ խարխլելու բարձրագույն հաշվեթանիչ հաստատությունները, ընդ որում մնալով օրենքի սահմաններում: Հետազոտության մեջ ներառված երկրների միայն մեկ երրորդից պակասն է, որ իրենց բյուջեներում ներկայացնում է բավարար չափով մանրամասն տեղեկատվություն՝ հասկանալու համար, թե ինչպես են նրանց բյուջեները հնարավորություն տալու լուծելու աղքատության հետ կապված խնդիրները, և երկրների միայն 14%-ն է, որոնք իրենց բյուջեներում ներկայացնում են իրենց ծախսերը նաև ըստ գենդերային չափորոշիչների: Վերջապես, երկրների միայն 8%-ն է, որոնցում առկա են բյուջետային գործընթացներում սոցիալապես խոցելի շերտերին ներգրավելու օրենսդրորեն սահմանված խողովակներ:

Ինչպես նշում է ՄԲԳ-ի հանրային քաղաքականության գծով ավագ տնօրեն Վիվեկ Ռամկումարը – «Մեզ անհրաժեշտ է առաջնորդվել «բոլոր ձեռքերը տախտակամածի վրա» մոտեցումով, երբ հասարակության յուրաքանչյուր անդամ կարողանա ասել իր խոսքը, թե ինչպես և որքան հանրային միջոցներ պետք հավաքել, պարտք վերցնել և ծախսել: Բարեփոխումների մտածելակերպով առաջնորդվող երկրները և դոնորները պետք է ներդրումներ կատարեն իրենց երկրների ֆիսկալ հաշվետվողականության համակարգերում՝ հզորացնելու համար իրենց առանցքային պետական մարմինները, պատգամավորներին, հաշվեթանիչ բարձրագույն մարմին, քաղհասարակության

կազմակերպություններին և հանրությանը՝ ապահովելու համար հանրային միջոցների արդյունավետ և արդարացի կառավարումը:»

«Մենք ոգևորված ենք տեսնել հետազոտության Նիգերիայի և այլ երկրների առաջընթացը, որը երևում է հետազոտության արդյունքներից: Ներառական մոտեցումները մեծացնում են ստացվածօգուտները (դիվիդենտները): Մենք կոչ ենք անում կառավարություններին պահպանելու առաջընթացը և ավելի իմաստալից կերպով ներգրավելու հանրության տարբեր շերտերին իրենց եկամուտների և ծախսերի առաջնայնությունները որոշելու գործում: Հանրության հետ հետադարձ կապը կարող է օգնել կառավարություններին ավելի լավ կառավարելու հանրային կենսական միջոցները:» - նշում է ՄԲԳ-ի Նիգերիայի ազգային գրասենյակի տնօրեն Օսթին Նդիոկվելուն:

ԲՀՀ-ն աշխարհի 120 երկրներում անցկացվող պետական բյուջեների գործընթացների թափանցիկությունը, վերահսկողությունը և հանրային մասնակցությունը գնահատող միակ համեմատական, անկախ և կանոնավոր կերպով իրականացվող հետազոտությունն է:

###

Բաց բյուջեների այս, թվով 8-րդ հետազոտության մեջ (առաջին անգամ այն իրականացվել է 2006 թվականին) առաջին անգամ ընդգրկվել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի՝ հետազոտությամբ գնահատված բյուջետային գործընթացների և փաստաթղթերի երեք հիմնական չափորոշիչների (թափանցիկություն, մասնակցայնություն և վերահսկողություն) ցուցանիշները տալիս են բավականին յուրահատուկ պատկեր: Մի կողմից, **Թափանցիկության** չափորոշիչի (որով գնահատվում է, թե որքանով է հանրությանը հասանելի կառավարության կողմից հանրային միջոցների հավաքագրման և ծախսման մասին տեղեկատվությունը) Հայաստանի ցուցանիշը 0-ից 100 սանդղակով հավասար է **61**-ի (33-րդ տեղը 120 երկրների թվում), որը բավականին բարձր ցուցանիշ է և թույլ է տալիս նրան դասել

բյուջետային բավարար թափանցիկությունն ունեցող երկրների (61 և ավել միավոր ունեցող երկրներ) շարքում, որոնցում առկա է տեղեկատվության զգալի ծավալի հասանելիություն

Մյուս կողմից թափանցիկության այսպիսի բարվոք ֆոնին ծայրահեղ ցածր և մտահոգիչ է Հայաստանի **Մասնակցայնության** չափորոշիչի (որով գնահատվում են բյուջետային գործընթացի տարբեր փուլերում հանրության համար իմաստավոր մասնակցությունն ապահովող օրենսդրորեն սահմանված մեխանիզմները) ցուցանիշը: Այն հավասար է **6**-ի (0-ից 100 սանդղակում), որով այն հայտնվում մասնակցայնության անբավարար մակարդակ ունեցող երկրների շարքում, որոնցում այդպիսի մեխանիզմները բացակայում են կամ շատ սակավ են:

Ինչ վերաբերում է երրորդ չափորոշիչին՝ **Վերահսկողությանը** (գնահատում է օրենսդիր և բարձրագույն հաշվեթևիչ մարմինների դերը բյուջետային գործընթացները վերահսկելու հարցում), ապա այստեղ Նույնպես, ինչպես և մասնակցայնության դեպքում, Հայաստանն այդ չափորոշիչի իր **50** միավոր (0-ից 100 սանդղակում) ցուցանիշով հայտնվում է այն երկրների շարքում, որոնցում առկա է պետական բյուջեի նկատմամբ վերահսկողության սահմանափակ մակարդակ: Ակնհայտ է, որ վերահսկողության այդպիսի մակարդակը բավարար չէ, բայց իրավիճակն այնքան վատ չէ, որքան մասնակցայնության դեպքում: **Աղյուսակում 1**-ում բերված են ԲՀՀ 2021-ի շրջանակում հաշվարկված թափանցիկության, մասնակցայնության և վերահսկողության չափորոշիչների ցուցանիշներն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների համար:

### Աղյուսակ 1.

#### Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների բյուջեի թափանցիկության, մասնակցայնության և վերահսկողության ցուցանիշները համաձայն ԲՀՀ 2021-ի արդյունքների

Երկրներ	Թափանցիկություն	Մասնակցայնություն	Վերահսկողություն
Վրաստան	87	44	74
Ռուսաստան*	73	28	78

<b>Բուլղարիա</b>	71	26	61
<b>Սլովենիա</b>	66	11	83
<b>Մոլդովա</b>	65	11	63
<b>Սլովակիա</b>	65	22	56
<b>Ուկրաինա</b>	65	39	82
<b>Խորվաթիա</b>	64	17	65
<b>Ղազախստան</b>	63	9	61
<b>Ռումինիա</b>	63	7	43
<b>Ղրղզստան</b>	62	26	61
<b>ՀԱՅԱՍՏԱՆ</b>	61	6	50
<b>Չեխիա</b>	60	15	83
<b>Լեհաստան</b>	60	22	82
<b>Ադրբեջան</b>	57	9	63
<b>Թուրքիա</b>	55	0	61
<b>Ալբանիա</b>	52	6	67
<b>Սերբիա</b>	46	2	54
<b>Հունգարիա</b>	44	0	57
<b>Հյուսիսային Մակեդոնիա</b>	36	6	54
<b>Բոսնիա և Հերցեգովինա</b>	32	9	57
<b>Տաջիկստան</b>	16	0	43
<b>Տարածաշրջանային միջին</b>	57	14	63

\*Ռուսաստանի թափանցիկության ցուցանիշն ադեկվատ չի հաշվարկվել: